



# Հայաստան/ ՄԱԲՀ-ն մեծարեց հայկական ընտանիքները և կազմակերպեց հանրային հեռուստաքննարկում՝ նշելով 2008 թ. Բնակչության համաշխարհային օրը

«...Մեր ընտանիքը ես համեմատում եմ մի գեղեցիկ գորգի հետ, որը գործվել է քսան տարիների ընթացքում, զգուշորեն, սիրով, ընտրելով յուրաքանչյուր թելի որակն ու գույնը, և այդ գորգը չեմ փոխի աշխարհի ոչ մի գանձի հետ:»

*Լաուրա Կարապետյան*

Դա անկեղծ և անմիջական միտք էր, որով կիսվեց Բնակչության համաշխարհային օրվա առթիվ Հայաստանի ՄԱԲՀ-ի կողմից կազմակերպած «Իմ երջանիկ ընտանիքը» մրցույթի մասնակիցներից մեկը: Մրցույթի շրջանակում կազմակերպվեց լավագույն 20 ընտանեկան լուսանկարների ցուցահանդես, որը բացվեց ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի նախասրահում ս.թ. հուլիսի 14-ին:



Այդ օրը ՄԱԿ-ի գրասենյակը հյուրընկալել էր կառավարության, քաղաքացիական հասարակության, բիզնեսի և ՋԼՄ-ների ներկայացուցիչներին, որոնք եկել էին կիսելու օրվա ոգևորությունը ՄԱԲՀ-ի գործըներների, հայ ընտանիքների և իրենց ընկերների հետ:

2008թ.-ի Բնակչության համաշխարհային օրվա խորագիրն էր՝ «Դա իրավունք է, եկե՛ք իրագործենք այն»։ մի կարգախոս, որը քաջալերում է անհատներին իրագործելու ընտանիքում երեխաների քանակը և տարիքային տարբերությունը պատասխանատվությամբ և ինքնակամ որոշելու իրենց իրավունքը:

Լուսանկարների ցուցահանդեսի խնդիրն էր արտացոլել ընտանեկան երջանկությունը լուսանկարների և թեմատիկ պատմությունների միջոցով: Ցուցադրված աշխատանքները ներկայացնում էին հայ ընտանիքների երջանկության տարբեր պահեր և դրանց հետ կապված պատմություններ:

Մինչդեռ յուրաքանչյուր ընտանիք ներկայացրել էր իր անկրկնելի և յուրահատուկ պատկերացումը երջանկության մասին՝ ցուցադրված լուսանկարների կամ անկեղծ և զգացմունքային պատմությունների միջոցով,

բոլորն էլ եկան մի ընդհանուր եզրակացության. երեխաների քանակը որոշելու, ընտանիքը և ապագան պլանավորելու իրավունքը զենդերային հավասարության ապահովման հետ մեկտեղ, յուրաքանչյուր ընտանիքի սիրո, ներդաշնակության և երջանկության գրավականն է:

**Միջոցառումը բացեց ՄԱԿ-ի մշտական համակարգող/ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացուցիչ Տկն. Կոնսուելո Վիդալ Բոյուսը,** որն իր ողջույնի խոսքում ընդգծեց միջազգային դոնոր համայնքի և պետությունների դերը կանանց և տղամարդկանց համար առողջապահական ծառայությունների, այդ թվում Հայաստանում վերարտադրողական առողջության մատչելիությունն ապահովելու գործում:

«...Սեփական փորձից կարող եմ ասել, որ կանայք ամեն դեպքում երջանկություն արարելու, պահպանելու և վերագտնելու վարպետուհիներ են...Ամուր արական բռունցքի զարկերը սեղանին գուցե և արդյունավետ են, բայց անձամբ ես նախընտրում եմ անդադար համբուրել այն ձեռքերը, որոնք պատրաստ են ափ ընդ ափ տալ՝ հանուն Նորին Գերազանցություն ընտանիքի երջանկության:»

*Դավիթ Վարդազարյան*

ՄԱԲՀ-ի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն իրենց ելույթներում շեշտեցին ընտանիքի պլանավորման և վերարտադրողական իրավունքների կարևորությունը և կոչ արեցին կառավարությանը օժանդակել Հայաստանում սոցիալական և առողջապահական համակարգերի կայացմանը:

Մրցույթին մասնակցելու և բարի կամք դրսևորելու համար ՄԱԲՀ-ն պարզևատրեց բոլոր ընտանիքներին հուշանվերային բաժակներով՝ «Իմ երջանիկ ընտանիքը» մակագրությամբ:

Ի պատասխան, մասնակիցներն հայտնեցին իրենց երախտագիտությունը Հայաստանի ՄԱԲՀ-ին՝ ինքնարտահայտվելու յուրահատուկ հնարավորություն ընձեռելու համար և հույս հայտնեցին որ ապագայում էլ ՄԱԲՀ-ն կշարունակի աշխատել հայ ընտանիքների բարեկեցության բարձրացման ուղղությամբ՝ «երջանկություն» պարզաբանությամբ բոլորին:

Միջոցառումը լուսաբանող ՋԼՄ-ների, ինչպես նաև ողջ լսարանի ուշադրությանը հատկապես արժանացավ հաշմանդամների մի զույգ, որը, չնայած կյանքի բոլոր դժվարություններին և բարդություններին, ունեցել էր մի աղջնակ, և որը կիսեց մնացած մասնակիցների հետ ընտանիք լինելու իրենց երջանկությունը: Այս թեև փոքր, սակայն ամուր ընտանիքը նվաճեց միջոցառման բոլոր ներկաների համակրանքը և արժանացավ հատուկ մրցանակի:

Այս հատուկ օրը նվիրված էր ընտանիքներին, ընտանեկան արժեքներին, կյանքի մարտահրավերներին և հեռանկարներին: Օրվա



միջոցառումների շարքում առանձնանում է նաև ՀՀ հանրային հեռուստատեսության «5-րդ Անիվ» վերլուծական հաղորդաշարի հատուկ թողարկումը, որին մասնակցեցին ընտանիքի



հիմնախնդիրների և վերարտադրողական առողջության ոլորտում աշխատող պետական պաշտոնյաները, ՀՀ ԳԱ թղթակից-անդամ և ՀԿ ներկայացուցիչներ ինչպես նաև ՄԱԲՀ-ի ծրագրի ղեկավարը:

Խնդիրներին, մասնավորապես երկրում ձևավորված ժողովրդագրական իրավիճակի, առողջապահական սեկտորի մարտահրավերների ու բարեփոխումների, ինչպես նաև վերարտադրողական իրավունքների և հանրային կրթության հարցերին:

Քննարկման մասնակիցները հանգեցին այն եզրակացության, որ հայ ընտանիքի առողջությունը և բարեկեցությունը ապահովելու համար անհրաժեշտ է **բարելավել** վերարտադրողական առողջապահական ծառայությունները, **ապահովել** հավասար իրավունքներ և հնարավորություններ ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար, ու **պայքարել** ընտանեկան բռնության երևույթի դեմ:

